ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 26.06.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/09

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ)՝ քննելով «Խաչպար» ՍՊԸ-ի 05.06.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2017/09 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «Խաչպար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Խաչպար» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 05.06.2017թ. Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է, որ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից 2017թ. փետրվարի 15-ին թիվ 35/2 որոշմամբ հայտարարվել է «ՍԳԼ-ՇՀԱՊՁԲ-17/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Խաչպար» ՍՊԸ-ն:

2017թ. հունիսի 1-ին Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ժամը 11:00-ին հայտերի գնահատման նիստ է հրավիրել, որի ժամանակ՝ հիմնվելով «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի դեղատան վարիչի եզրակացությունների վրա, մերժել է «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը՝ թիվ 122, 132 և 133-րդ չափաբաժինների մասով՝ հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմնավորմամբ և հաղթող է ճանաչել «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ին:

Ընկերության կողմից ներկայացված բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները հետևյալն են՝

ա) Ընթացակարգի հրավերի պայմանագրին կից Հավելված թիվ 1-ի «Տեխնիկական բնութագիր»-ը սյունակում բացակայում է նախատեսված պայմանների մասին գրառումներ թիվ 122, 132 և 133-րդ չափաբաժինների մասով՝ առկա են միայն «Ջոնսոն և Ջոնսոն» կորպորացիայի արտադրության ախտահանիչ միջոցների բրենդային անվանումներ, որտեղ բացակայում են «կամ համարժեք» բառերը, ինչը հակասում է «Գնումների մասին» ՀՕ-206-Ն օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 12-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներին:

բ) Հրավերի թիվ 122, 132 և 133-րդ չափաբաժինների մասով պահանջվող պայմաններ չնախատեսելու պարագայում Պատվիրատուի մերժումը հակասում է Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի սահմանումներին:

գ) Պատվիրատուի կողմից Ընկերության հայտի մերժման անհիմն լինելը ապացուցվում է << առողջապահության նախարարության 07.11.2016թ. թիվ ԱԲ/22-Ն/12127-16 մասնագիտական փորձաքննության եզրակացությամբ, համաձայն որի «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից առաջարկված և Պատվիրատուի կողմից Ընթացակարգի հրավերով նախատեսված ախտահանիչ միջոցները համապատասխան և համարժեք են, ինչը անտեսվել է Պատվիրատուի գնահատող հանձնաժողովի կողմից:

դ) Հրավերի թիվ 122-րդ չափաբաժնի մասով Պատվիրատուի գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրության 1-ին պարբերությունում բերված թվերը բացարձակապես ճիշտ չեն և չեն համապատասխանում << առողջապահության նախարարության կողմից հաստատված հրահանգների աղյուսակներում առկա թվերի հետ՝ ինչպես «Պրեսեպտ»-ի, այնպես էլ՝ «Դիմաքս քլոր»-ի պարագայում:

ե) Հրավերի թիվ 122-րդ չափաբաժնի մասով Պատվիրատուի գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրության վերջին պարբերություններում բերված թվերը համապատասխանում են միայն «Պրեսեպտ», «Դիմաքս քլոր» և «Աբակտերիլ քլոր» կոնկրետ բրենդային անվանումներով ախտահանիչ միջոցներին, չեն հանդիպում այլ արտադրողների այլ անվանում ունեցող ախտահանիչ միջոցների մոտ, իսկ կոնկրետ անվանում ունեցողի եզակի տվյալներին հղում կատարելը չհիմնավորված խոչընդոտներ է առաջացնում և մրցակցության հավասար պայմաններ չի ապահովում մասնակիցների

համար, ինչը հակասում է Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի պահանջներին, ինչպես նաև գնման գործընթացը կազմակերպվում է խտրական հիմունքներով, ինչը չի նպաստում պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնմանը և նրանց միջև մրցակցության խրախուսմանը՝ հակասելով Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2րդ կետերի պահանջներին:

զ) Հրավերի թիվ 133-րդ չափաբաժնի մասով Պատվիրատուի գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվածը բացարձակապես ճիշտ չի և չի համապատասխանում ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված «Ստերոքս»-ի մեթոդական հրահանգին, որտեղ նշված է, որ առաջարկված «Ստերոքս»-ը իրենից ներկայացնում է կիրառման համար պատրաստի հեղուկ, այլ ոչ թե կոնցենտրատ է, ինչպես նշված Պատվիրատուի թիվ 3 արձանագրությամբ, իսկ ազդող նյութ է հանդիսանում գլյուտար ալդեհիդը մինչև 2,7 % պարունակությամբ՝ ինչպես առաջարկված «Ստերոքս»-ի, այնպես էլ պահանջված «Սայդեքս»-ի պարագայում:

է) Պատվիրատուի կողմից հրավերի թիվ 122, 132 և 133-րդ չափաբաժինների մասով «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից առաջարկված համարժեք ապրանքները մերժելու և «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու դեպքում Պատվիրատուն կունենա 5 916 000 ՀՀ դրամի գերածախս, ինչը հակասում է Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված նպատակներին:

Ընկերությունը, Խորհրդին ներկայացված բողոքով խնդրել է՝

1. Ղեկավարվելով Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետով՝ կիրառել ժամանակավոր միջոց և կասեցնել «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի կարիքների համար «Բժշկական պարագաների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՍԳԼ-ՇՀԱՊՁԲ-17/9» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.06.2017թ. նիստի թիվ 3 արձանագրության թիվ 1 կետով կայացված «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը՝ թիվ 122, 132 և 133-րդ չափաբաժինների մասով:

2. Ղեկավարվելով Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետով՝ դադարեցնել «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի կարիքների համար «Բժշկական պարագաների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՍԳԼ-ՇՀԱՊՁԲ-17/9» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.06.2017թ. նիստի թիվ 3

արձանագրության թիվ 1 կետով կայացված «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը՝ թիվ 122, 132 և 133-րդ չափաբաժինների մասով:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 09.06.2017թ. ժամը 11:45-ի նիստի վերաբերյալ, տնօրենը ապահովել է իր մասնակցությունը, ով պնդել է 05.06.2017թ. բողոքով Խորհրդին հայտնած դիրքորոշումը:

2. **«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները**

Խորհուրդը 06.06.2017թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/10090-17 գրությամբ դիմել է Պատվիրատուին՝ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ կարծիք ստանալու նպատակով, սակայն Պատվիրատուն Խորհրդին չի ներկայացրել իր դիրքորոշումը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 09.06.2017թ. ժամը 11:45-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. **ԳԲԽ-ԱՄ-2017/09 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

ԳԲԽ-ԱՄ-2017/09 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից 2017թ. փետրվարի 15-ին թիվ 35/2 որոշմամբ հայտարարվել է «ՍԳԼ-ՇՀԱՊՁԲ-17/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Խաչպար» ՍՊԸ-ն:

2. Պատվիրատուի կողմից Ընթացակարգի հրավերի պայմանագրին կից N 1 Հավելվածում՝ տեխնիկական բնութագրի «Անվանումը» սյունակում, թիվ 122-րդ չափաբաժնով սահմանված է ***«Պրեսեպտ 2.5 N 100»***, թիվ 132-րդ չափաբաժնով՝ ***«Սայդեքս ՕՊԱ»***, իսկ թիվ 133-րդ չափաբաժնով՝ ***«Սայդեքս»***:

3. «Խաչպար» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով 122-րդ չափաբաժնի համար առաջարկել է ***«Պրեսեպտ 2.5 N 100» - համարժեք՝ «Դիմաքս քլոր»***, 132-րդ չափաբաժնի համար՝ ***«Սայդեքս ՕՊԱ» - համարժեք՝ «Սպերոքս», իսկ թիվ 133-րդ չափաբաժնի համար՝ «Սայդեքս»- համարժեք՝ «Սպերոքս»:***

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 01.06.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացրած որոշմամբ արձանագրել է, որ Ընթացակարգի 122-րդ չափաբաժնի մասով ցածր գնային առաջարկ է ներկայացրել «Խաչպար» ՍՊԸ-ն, որի ներկայացրած նմուշը փորձարկվել է «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից, մասնավորապես պարզվել է, որ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Դիմաքս քլոր»-ի հաբերը լավ չեն լուծվում, ըստ «Դիմաքս քլոր»-ի մեթոդական հրահանգի 0,1%-անոց լուծույթ ստանալու համար անհրաժեշտ է կիրառել 7 հաբ 5 լ ջրին, այնինչ՝ «Պրեսեպտ»-ի դեպքում, ըստ մեթոդական հրահանգի 0,1%-անոց լուծույթի համար ծախսվում է 6 հաբ 5 լ ջրին, հետևաբար՝ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Դիմաքս քլոր» ախտահանիչ միջոցը համարժեք չէ Պատվիրատուի կողմից Ընթացակարգի հրավերով նախատեսված «Պրեսեպտ» ախտահանիչ միջոցին: «Դիմաքս քլոր» ախտահանիչ հաբերով լուծույթ ստանալուց հետո առաջանում է նստվածք, որը հետո պղտորվում է: Փորձարկման ժամանակ կիրառված հաբերով ստացված 0,1%-անոց լուծույթը լավ չի ազդում, իսկ ավելի խիտ լուծույթ ստանալու դեպքում այն առաջացնում է մաշկի, աչքերի և շնչառական օրգանների գրգռում: Պրեսեպտի ազդող նյութ է հանդիսանում դիքլորիզոցիանի նատրիումական աղը, որը կազմում է հաբի քանակության 50 %-ը: Հաբը կշռում է 5 գրամ, որի մեջ ազդող նյութի քանակը 2.5 գրամ է, 1 հաբի լուծման ժամանակ անջատվում է մինչև 1,76գ ակտիվ քլոր, սակայն «Դիմաքս քլոր»-ի դեպքում հաբը կշռում է 2,7 գրամ, 1 հաբի լուծման ժամանակ անջատվում է մինչև 1,5գ ակտիվ քլոր, հետևաբար այս մասով ևս Ընկերության կողմից առաջարկված «Դիմաքս քլոր»-ը համարժեք չէ, այնուհետև հաջորդ տեղ զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկված ախտահանիչ միջոցը ևս գնահատվել է ոչ համարժեք և հաղթող է ճանաչվել «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ն, որը առաջարկել է «Պրեսեպտ»:

5. Վերը նշված արձանագրությամբ արձանագրվել է նաև, որ թիվ 132-րդ և 133-րդ չափաբաժինների համար ցածր գնային առաջարկ է ներկայացրել «Խաչպար» ՍՊԸ-ն, սակայն Ընկերության կողմից նշված չափաբաժիններով առաջարկված նյութերը

կոնցենտրատներ են և հաջորդ տեղ զբաղեցրած է ճանաչվել «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ն, որը համապատասխանում է Ընթացակարգի պահանջներին:

6. «Խաչպար» ՍՊԸ-ն 05.06.2017թ. Խորհրդին ներկայացրած բողոքին կից ներկայացրել է ՀՀ առողջապահության նախարարության 07.11.2016թ. թիվ ԱԲ/22-Ն/12127-16 գրությունն ուղղված «Խաչպար» ՍՊԸ-ին, համաձայն որի թիվ 122-րդ չափաբաժի համար սահմանված «Պրեսեպտ» և «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից որպես համարժեք առաջարկված «Դիմաքս քլոր» ախտահանիչ միջոցները, ըստ ազդող նյութերի, ֆիզիկո-քիմիական տվյալների, կիրառման ոլորտների, ախտահանման սպեկտորների և պիտանելիության ժամկետների նույն են, իսկ որոշ դեպքերում «Դիմաքս քլոր»-ը գերազանցում է:

Վերոհիշյալ գրության համաձայն՝ 132-րդ չափաբաժնի համար սահմանված «Սայդեքս ՕՊԱ» և «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից որպես համարժեք առաջարկված «Ստերոքս» ախտահանիչ միջոցները, ըստ ազդող նյութերի պատկանում են միևնույն քիմիական խմբին, ցուցանիշները համընկնում են, կիրառման ոլորտներն ու նպատակները նույն են, իսկ ախտահանման սպեկտորներով «Ստերոքս»-ը գերազանցում է:

4. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը, ուսումնասիրելով «Խաչպար» ՍՊԸ-ի 05.06.2017թ. ներկայացրած բողոքը՝ կից նյութերով, Ընթացակարգի հրավերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի համաձայն՝

1.Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ,

2) ***գնումների և գնուների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:***

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված նպատակի իրագործման համար, գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝

1) գնման գործընթացի ***միասնական կանոններով, մրցակցային,*** թափանցիկ, հրապարակային և ***ոչ խտրական հիմունքներով*** կազմակերպում,

2) պայմանագրի կնքման նպատակով ***մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:***

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա, ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ***գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն (...)»:***

Օրենք 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

«Գնման առարկայի բնութագրերը»՝

1) պետք է մրցակցության ***հավասար պայմաններ*** ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված ***խոչընդոտների առաջացմանը.***

3) պետք է լինեն ***օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.***

4) ***ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների,*** իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ***ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:***

Օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ***գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:***

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից 2017թ. փետրվարի 15-ին թիվ 35/2 որոշմամբ հայտարարվել է «ՍԳԼ-ՇՀԱՊՁԲ-17/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Խաչպար» ՍՊԸ-ն:

Պատվիրատուի կողմից Ընթացակարգի հրավերի պայմանագրին կից N 1 Հավելվածում՝ տեխնիկական բնութագրի «Անվանումը» սյունակում, թիվ 122-րդ չափաբաժնով սահմանված է ***«Պրեսեպտ 2.5 N 100»***, թիվ 132-րդ չափաբաժնով՝ ***«Սայդեքս ՕՊԱ»***, իսկ թիվ 133-րդ չափաբաժնով՝ ***«Սայդեքս»***:

«Խաչպար» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով 122-րդ չափաբաժնի համար առաջարկել է ***«Պրեսեպտ 2.5 N 100» - համարժեք՝ «Դիմաքս քլոր»***, 132-րդ չափաբաժնի համար՝ ***«Սայդեքս ՕՊԱ» - համարժեք՝ «Սպերոքս», իսկ թիվ 133-րդ չափաբաժնի համար՝ «Սայդեքս»- համարժեք՝ «Սպերոքս»:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 01.06.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացրած որոշմամբ արձանագրել է, որ Ընթացակարգի 122-րդ չափաբաժնի մասով ցածր գնային առաջարկ է ներկայացրել «Խաչպար» ՍՊԸ-ն, որի ներկայացրած նմուշը փորձարկվել է «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից, մասնավորապես պարզվել է, որ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Դիմաքս քլոր»-ի հաբերը լավ չեն լուծվում, ըստ «Դիմաքս քլոր»-ի մեթոդական հրահանգի 0,1%-անոց լուծույթ ստանալու համար անհրաժեշտ է կիրառել 7 հաբ 5 լ ջրին, այնինչ՝ «Պրեսեպտ»-ի դեպքում, ըստ մեթոդական հրահանգի 0,1%-անոց լուծույթի համար ծախսվում է 6 հաբ 5 լ ջրին, հետևաբար «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Դիմաքս քլոր» ախտահանիչ միջոցը համարժեք չէ Պատվիրատուի կողմից Ընթացակարգի հրավերով նախատեսված «Պրեսեպտ» ախտահանիչ միջոցին: «Դիմաքս քլոր» ախտահանիչ հաբերով լուծույթ ստանալուց հետո առաջանում է նստվածք, որը հետո պղտորվում է: Փորձարկման ժամանակ կիրառված հաբերով ստացված 0,1%-անոց լուծույթը լավ չի ազդում, իսկ ավելի խիտ լուծույթ ստանալու դեպքում այն առաջացնում է մաշկի, աչքերի և շնչառական օրգանների գրգռում: Պրեսեպտի ազդող նյութ է հանդիսանում դիքլորիզոցիանի նատրիումական աղը, որը կազմում է հաբի քանակության 50 %-ը: Հաբը կշռում է 5 գրամ, որի մեջ ազդող նյութի քանակը 2.5 գրամ է, 1 հաբի լուծման ժամանակ անջատվում է մինչև 1,76գ ակտիվ քլոր, սակայն «Դիմաքս

քլոր»-ի դեպքում հաբը կշռում է 2,7 գրամ, 1 հաբի լուծման ժամանակ անջատվում է մինչև 1,5գ ակտիվ քլոր, հետևաբար այս մաով ևս համարժեք չէ, այնուհետև հաջորդ տեղ զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկված ախտահանիչ միջոցը ևս գնահատվել է ոչ համարժեք և հաղթող է ճանաչվել «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ն, որը առաջարկել է «Պրեսեպտ»:

Վերը նշված արձանագրությամբ արձանագրվել է նաև, որ թիվ 132-րդ և 133-րդ չափաբաժինների համար ցածր գնային առաջարկ է ներկայացրել «Խաչպար» ՍՊԸ-ն, սակայն Ընկերության կողմից նշված չափաբաժիններով առաջարկված նյութերը կոնցենտրատներ են և հաջորդ տեղ զբաղեցրած է ճանաչվել «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ն, որը համապատասխանում է Ընթացակարգի պահանջներին:

«Խաչպար» ՍՊԸ-ն 05.06.2017թ. Խորհրդին ներկայացրած բողոքին կից ներկայացրել է << առողջապահության նախարարության 07.11.2016թ. թիվ ԱԲ/22-Ն/12127-16 գրությունն ուղղված «Խաչպար» ՍՊԸ-ին, համաձայն որի թիվ 122-րդ չափաբաժի համար սահմանված «Պրեսեպտ» և «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից որպես համարժեք առաջարկված «Դիմաքս քլոր» ախտահանիչ միջոցները, ըստ ազդող նյութերի, ֆիզիկո-քիմիական տվյալների, կիրառման ոլորտների, ախտահանման սպեկտորների և պիտանելիության ժամկետների նույն են, իսկ որոշ դեպքերում «Դիմաքս քլոր»-ը գերազանցում է:

Վերոհիշյալ գրության համաձայն՝ 132-րդ չափաբաժնի համար սահմանված «Սայդեքս ՕՊԱ» և «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից որպես համարժեք առաջարկված «Ստերոքս» ախտահանիչ միջոցները, ըստ ազդող նյութերի պատկանում են միևնույն քիմիական խմբին, ցուցանիշները համընկնում են, կիրառման ոլորտներն ու նպատակները նույն են, իսկ ախտահանման սպեկտորներով «Ստերոքս»-ը գերազանցում է:

Ելնելով վերոգրյալից, Խորհուրդն արձանագրում է, որ Պատվիրատուի կողմից Ընթացակարգի հրավերը կազմվել է Օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջների խախտմամբ, այն է՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի

բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Այսպես, Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Ինչ վերաբերվում է «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը Ընթացակարգի հրավերի թիվ 122-րդ և 132-րդ չափաբաժինների մասով որպես ոչ համարժեք մերժելուն, ապա Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուն գործել է ոչ իրավաչափ, քանի որ ՀՀ առողջապահության նախարարության 07.11.2016թ. թիվ ԱԲ/22-Ն/12127-16 գրության համաձայն՝ թիվ 122-րդ չափաբաժի համար սահմանված «Պրեսեպտ» և «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից որպես համարժեք առաջարկված «Դիմաքս քլոր» ախտահանիչ միջոցները, ըստ ազդող նյութերի, ֆիզիկո-քիմիական տվյալների, կիրառման ոլորտների, ախտահանման սպեկտորների և պիտանելիության ժամկետների նույն են, իսկ որոշ դեպքերում «Դիմաքս քլոր»-ը գերազանցում է:

Ավելին, ՀՀ առողջապահության նախարարության վերը նշված գրության համաձայն՝ թիվ 132-րդ չափաբաժնի համար սահմանված «Սայդեքս ՕՊԱ» և «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից որպես համարժեք առաջարկված «Ստերոքս» ախտահանիչ միջոցները, ըստ ազդող նյութերի պատկանում են միևնույն քիմիական խմբին, ցուցանիշները համընկնում են, կիրառման ոլորտներն ու նպատակները նույն են, իսկ ախտահանման սպեկտորներով «Ստերոքս»-ը գերազանցում է:

Ինչ վերաբերվում է թիվ 133-րդ չափաբաժնով Ընկերության հայտը մերժելուն, ապա այս մասով Խորհուրդն արձանագրում է, որ Պատվիրատուն ևս գործել է ոչ իրավաչափ, քանի որ Ընկերության հայտը Ընթացակարգի թիվ 133-րդ չափաբաժնի մասով մերժվել է այն հիմնավորմաբ, որ Ընկերության կողմից առաջարկված ախտահանիչ միջոցը կոնցենտրատ է, սակայն Խորհուրդն արձանագրում է, որ թիվ 133-րդ չափաբաժնի մասով Ընկերության կողմից առաջարկված «Ստերոքս» ախտահանիչ միջոցի ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգի համաձայն՝ ***«Ստերոքս» ախտահանիչ միջոցը իրենից ներկայացնում է կիրառման համար պատրաստի, թափանցիկ, անգույնից մինչև դեղին գույնի հեղուկ..***:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 05.06.2017թ. ներկայացված բողոքը բավարարել՝ դադարեցնել «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի կարիքների համար «Բժշկական պարագաների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՍԳԼ-ՇՀԱՊՁԲ-17/9» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.06.2017թ. նիստի թիվ 3 արձանագրության թիվ 1 կետով կայացված «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը՝ թիվ 122, 132 և 133-րդ չափաբաժինների մասով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ